# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. մարտի 27 թիվ 28- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՆՈՐ ԱՐԹԻԿԻ Ա. ԱՐՍԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ԵՎ << ՈՒՇԻԻ Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

**Կարգադրում եմ՝**

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Նոր Արթիկի Ա. Արսենյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Ծաղկահովիտի Ա.Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց>> և <<Ուշիի Ն. Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի պետ՝ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Իշխան Բարսեղյանի, Սիրան Ասատրյանի, Արիս Թովմասյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:
2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 13 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2013 թվականի ապրիլի 2-ից ավարտել 2013 թվականի ապրիլի 17-ին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ